ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.03.2022թ. թիվ 26/26-1/3847-2022 գրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 28.02.2022թ. թիվ 7 գրության հիման վրա, 07.03.2022թ. թիվ 26/26-1/3847-2022 գրությամբ նախաձեռնել է «Լեբրոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լեբրոն» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.03.2022թ. գրությամբ, ներկայացրել է առարկություն հետևյալ բովանդակությամբ.

«Տեղեկացնում ենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար մսի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով ընթացակարգին մասնակցել է մեր ընկերությունը և հաղթել:

Ծանոթանալով ՀՈԱԿ-ի ներկայացրած գրությանը՝ գտնում ենք, որ ՀՈԱԿ-ը աղավաղում է իրականությունը, քանի որ մեր ընկերությունը հանձնաժողովին փոստային ծառայության միջոցով ուղարկել է պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները: Ինչը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ հանձնաժողովը թաքցրել է և հայտնել է, որ մեր կողմից չի ներկայացվել: Այն չի համապատասխանում իրականությանը:

Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ կարող եք ինքներդ հարցնել հանձնաժողովին ու հավաստիանալ, որ մենք պահանջված փաստաթղթերը ներկայացրել ենք հանձնաժողովին»:

«Լեբրոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/92 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.02.2022թ. թիվ 7 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար իրականացված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. թիվ 7 արձանագրության թիվ 1 որոշմամբ «Լեբրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից: 09.02.2022թ. «Լեբրոն» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի ծանուցմամբ առաջարկվել է կնքել պայմանագիր: Սակայն ընտրված մասնակից ճանաչված «Լեբրոն» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից՝

ՀՀ գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չներկայացնելով որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև իրենց կողմից ստորագրված պայմանագիրը /կցվում է պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման և տասը աշխատանքային օր հետո դրա հիշեցման հավաստումները/:

Խնդրում ենք Ձեզ նախաձեռնել «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/92 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լեբրոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Լեբրոն» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.02.2022թ. էլեկտրոնային եղանակով «Լեբրոն» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել միջոցներ ձեռնարկել «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.03.2022թ. թիվ 26/26-1/3847-2022 գրությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 28.02.2022թ. թիվ 7 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 23.03.2022թ. ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի

ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լեբրոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Լեբրոն» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.02.2022թ. էլեկտրոնային եղանակով «Լեբրոն» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել միջոցներ ձեռնարկել «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընկերությունը 23.03.2022թ. ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ փոստային ծառայության միջոցով ուղարկել է պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ***կցելով «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանք, համաձայն որի DLES102447058AM նամակը «Լեբրոն» ՍՊԸ-ն (ուղարկող Պարգև Հակոբի Գասպարյան) «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին ուղարկել է 23.02.2022թ.:***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին ուղղված ***24.03.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/5029-2022 գրությամբ*** հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է քննվում «Լեբրոն» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ թիվ ՍՑ-ՆԳ-2022/92 ծածկագրով ընթացակարգը (պատվիրատու՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ, ծածկագիր՝ «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01»):

Թիվ ՍՑ-ՆԳ-2022/92 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առարկություն, որով վերջինս հայտնել է, որ փոստային ծառայության միջոցով ուղարկել է պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ կցելով «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանք, համաձայն որի DLES102447058AM նամակը «Լեբրոն» ՍՊԸ-ն (ուղարկող Պարգև Հակոբի Գասպարյան) «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին ուղարկել է 23.02.2022թ.:

Գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ ***խնդրում եմ հայտնել արդյո՞ք նշված ծրարում առկա են եղել պահանջված բոլոր փաստաթղթերը:***

Ի պատասխան նշված գրության, ***Պատվիրատուն 25.03.2022թ. թիվ 13 գրությամբ հայտնել է, որ ծրարում առկա են եղել միայն պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Լեբրոն» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 09.02.2022թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 10.02.2022թ. և լրացել 23.02.2022թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի պահպանմամբ, հետևաբար՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 07.03.2022թ. թիվ 26/26-1/3847-2022 գրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**